ՊՈԵԶԻԱՅԻ ԱՆԿՅՈՒՆ

ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒՄ ԵՆ ՄԵՐ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԸ

Արվեստի գուներանգ աշխարհում կան մարդիկ, որ տիրապետում են երկու կամ ավելի մասնագիտությունների: Մասնագիտությամբ մանկավարժ կամ բժիշկ, արհեստավոր կամ գիտնական լինելով՝ նրանք միեւնույն ժամանակ ստեղծագործում են. գրում են բանաստեղծություններ, ասմունքում են, նկարում են, մենապարում են, ձեռագործում են...

Սկզբում դա արվում է որպես հոգու պահանջ... Բայց մի գեղեցիկ օր, ստեղծագործողը, ոչ պակաս հաջողությամբ, հայտնվում է արվեստի որեւէ բնագավառում՝ գրականություն, բեմ, վրձնարվեստ, պարարվեստ եւ դառնում է ճանաչված արվեստագետ: Այստեղից էլ՝ մեր իրականության մեջ հաճախ տարածված՝ մանկավարժ-բանաստեղծ, գեներալ-երգահան, ճարտարապետ-դերասան «կոչումները»... Իրարից ծայրահեղորեն տարբեր զբաղմունքների այդ սինթեզ-զոդումը՝ իրականում այդ շնորհաշատ մարդկանց կյանքի բնականոն ռիթմն է, որ, իրենց խոստովանությամբ, օգնում է գտնելու սեփական «ես»-ը: Իսկ նրանց ստեղծագործությունը դառնում է ընթերցողի սեփականությունը:

Այսօր ձեր ուշադրությանն ենք ներկայացնում մեր ստեղծագործող հայրենակիցներին:

ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆ

Եվա Շաշվերդյան-Չիվչյան

Ծնունդով Ջիգրաշեն գյուղից է (Նինոծմինդայի մունիցիպալիտետ), ուր եւ ներկայումս ապրում է: Միջնակարգ կրթությամբ, 70 տարեկան այս կինը ողջ կյանքում գրել է բանաստեղծություններ: Ու, ի դեպ, ծայրից ծայր կարդում է իրեն հոգեհարազատ «Վրաստան» թերթը: Իր կյանքի ամենամեծ նվաճումը համարում է ընտանիքը՝ հինգ զավակներով, թոռներով, ծոռներով շենացած իր գերդաստանը: Իսկ հոգու խաղաղության համար՝ պարտական է ճերմակ թղթին, ում ազնվորեն վստահում է բանաստեղծություններ դարձած իր կարոտները, ցավերը, ուրախությունները, որոնք զարմանալիորեն սրտամոտ ու համահունչ են նաեւ ընթերցողներին: Եվա Շաշվերդյան-Չիվչյանը երկու գրքի հեղինակ է:

* * *

Անձրեւն ամպից է ծնվում,
Բայց ասելիքը թողնում է հողին:
Ամպից անգույն է ծնվում,
Բայց կանաչելը
Թողնում է հողին:
Ամպից խելառ
Ու խենթ է ծնվում,
Խոհեմությունը
Թողնում է հողին:
Ամպից լացով է ծնվում,
Բայց խնդալը թողնում է հողին:
Անձրե՛ւ, դու իմ
Ձեռքն ես լվանում,
Բայց մաքրվելը
Թողնում ես հողին:

Բարդուղիմեոս Շաշիկյան

Գրական անունը՝ **Սագառ Վառմա:** Քառասունհինգ տարեկան. գեղանկարիչ, դերասան, բանաստեղծ: Ապրում է Ախալքալաքիի մունիցիպալիտետի Աբուլ գյուղում: Աբուլի դպրոցում դասավանդել է արվեստ, գծագրություն, մաթեմատիկա առարկաները: Ախալքալաքիի ժողովրդական թատրոնում կերտել է դերեր: Արվեստը ուսուցման առարկա լինելուց բացի, նրա համար իրականությունը տեսնելու, ընկալելու, զգալու հնարավորություն, ու այդ բարդ ու գունագեղ իրականությունը յուրովի բացահայտելու ուսանելի միջոց է նաեւ: Ինքնատիպ այդ բացահայտումներից էլ ծնվում են Բարդուղիմեոս Շաշիկյանի ինքնատի՛պ գեղանկարները, բանաստեղծությունները ու արձակ պատումները:

ՎԱՐԴԸ ԾՂԱՑ ԻՐ ՓՇԻ ԾԱԿՈՑԻՑ

Օրը քնել է, չի ուզում զարթնել,
Արեւը չկա, կորել է անդարձ:
Քամին լռել, չի ուզում փչել,
Փչել, հետ բերել արեւին կորած:

Կյանքը անդունդից գլորվել է ցած,
Դողում է հիմա մահվան տաք գրկում,
Խռով է օրը արեւից հոգնած,
Արեւը այսօր շատ է ուշանում:

Օրը ճոճվում է իր կախաղանին,
Ծաղրում է կողքին դահիճը անգութ,
Հեծկլտում է գորշ ամպը լալագին,
Անձրեւ է գալիս, ձյուն է ու կարկուտ:

Աստղը սայթաքեց, ընկավ երկնքից.
Ու անհետ կորավ ծովում փոթորկված:
Վարդը ճչաց իր փշի ծակոցից,
Ու բացեց սրտիս վերքը չամոքված:

ԿՐԹԱԿԱՆ

ՈՉ ՎՐԱՑԱԼԵԶՈՒ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՊՐԱԿՏԻԿՈՍԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ԿՊԱՀՊԱՆՎԻ ՄԻՆՉԵՎ 2025-2026 ՈՒՍՏԱՐՎԱ ԱՎԱՐՏԸ

ՆՐԱՆՑ ԿՏՐՎԻ ԻՐԵՆՑ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու ստորագրությամբ՝ փոփոխություն է կատարվել Վրաստանի կառավարության «Ուսուցիչների մասնագիտական զարգացման եւ կարիերայի առաջխաղացման սխեմայի հաստատման մասին» որոշ դասավանդողների համար որոշման մեջ:

Մասնավորապես, ոչ վրացալեզու դպրոցների պրակտիկոս (գործող) ուսուցիչները (բացառությամբ՝ ազգային փոքրամասնությունների լեզուների՝ հայերենի եւ ադրբեջաներենի ուսուցիչների), որոնք չեն կարողացել փոխել իրենց կարգավիճակը՝ մինչեւ 2023 թվականի հունվար ամիսը եւ գրանցվել են 2023 թվականի առարկայի քննության համար, կթույլատրվի 2023 թվականին հանձնել առարկայական քննություն: Անցողիկ կլինի 1, 4, 7, 10 կրեդիտ-միավորը:

Վրաստանի կրթության եւ գիտության նախարարությունը շարունակում է իր ակտիվ աշխատանքը ուսուցիչներին աջակցելու եւ նրանց մասնագիտական զարգացմանը նպաստելու նպատակով: Այս անգամ նախարարության նախաձեռնությամբ փոփոխություններ են կատարվել Վրաստանի կառավարության 2019 թվականի մայիսի 23-ի «Ուսուցիչների մասնագիտական զարգացման եւ կարիերայի առաջխաղացման սխեման հաստատելու մասին» թիվ 241 որոշման մեջ, ըստ որի ոչ վրացալեզու բաժնի ուսուցիչները կպահպանեն իրենց պրակտիկանտի կարգավիճակը մինչեւ 2025-2026 ուսումնական տարվա ավարտը եւ եւս մի քանի անգամ հնարավորություն կտրվի ապացուցելու իրենց կոմպետենտությունը:

«Նշենք, որ ոչ վրացալեզու բաժնի ուսուցիչներին կառաջարկվեն լրացուցիչ նախապատրաստական դասընթացներ՝ թե' առարկայական գիտելիքների խորացման, թե' վրացերենի իմացության մակարդակի բարձրացման ուղղությամբ:

Փոփոխություններին համապատասխան, մինչեւ 2025-2026 ուսումնական տարվա ավարտը, նրանք կօգտվեն հրամանագրով նախատեսված պայմաններից, որոնցից օգտվել են պրակտիկանտ ուսուցիչները:

Այստեղ հիշեցնում ենք, որ Վրաստանի կրթության եւ գիտության նախարարությունն իրականացնում է ուսուցիչների պորտֆոլիոների գնահատման գործընթացը, որը կավարտվի ամռանը»,- ասված է Վրաստանի կրթության եւ գիտության նախարարության հաղորդագրության մեջ:

Քննությունները կմեկնարկեն հուլիսի 6-ին:

ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՓԱՌԱՏՈՆ

«ՄԻՄԻՆՈ» ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ - ԽՈՀԱՐԱՐԱԿԱՆ ՓԱՌԱՏՈՆ ԴԻԼԻՋԱՆՈՒՄ

Անցյալ դարի 80-ական թվականներից կինոսիրահարների կողմից ոգեւորությամբ ընդունված Գիորգի Դանելիայի «Միմինո» ֆիլմի հիմնական գործող անձինք, թելավցի Վալիկո Միզանդարին (Բուբա Կիկաբիձե) եւ դիլիջանցի Ռուբեն Խաչիկյանը (Ֆրունզիկ Մկրտչյան) արժանացան համընդհանուր սիրո եւ երկրպագության: Դրա վկայությունն է թեկուզ այն փաստը, որ Թբիլիսիում եւ Դիլիջանում ժամանակին տեղադրվեցին «Միմինոյի» ռեժիսորի ու հերոսների արձանները:

Բացի այդ, «Միմինոն» յուրովի վերածվեց տարբեր ոլորտներում վրաց-հայկական համատեղ միջոցառումների խորհրդանշանի: Այդ միջոցառումների թվին կարելի է դասել նաեւ ընթացիկ տարվա հունիսի 17-ին Հայաստանի Տավուշի մարզի Դիլիջան քաղաքի կենտրոնական հրապարակում առաջին անգամ անցկացված «Միմինո» հայ-վրացական մշակութային-խոհարարական փառատոնը, որի հիմնական նպատակը երկու հարեւան երկրների միջեւ զբոսաշրջային այցելությունների ակտիվացմանը նպաստելն է, միջմշակութային երկխոսությունն ու ժողովուրդների բարեկամությունն ամրապնդելը: Պատահական չէր նաեւ՝ հայ-վրացական առաջին փառատոնի անցկացման վայրը Դիլիջանն է ընտրվել, քանի որ ըստ «Միմինո» կինոնկարի սցենարի՝ ծնունդով այստեղից էր ֆիլմի հերոս վարորդ Ռուբիկը:

Փառատոնին հայկական եւ վրացական թիմերը ներկայացրեցին իրենց խոհանոցների բազմազանությունն ու պատմությունը, պարերն ու երգերը, արվեստի ու արհեստագործական աշխատանքները: Փառատոնի մասնակից հայ եւ վրացի թիմերը տաղավարներում պատրաստեցին եւ ներկայացրեցին իրենց խոհանոցի բազմազան ուտեստները:

Փառատոնի բացմանը հյուրերին ուղղված ողջույնի խոսքով հանդես եկան «Հայ խոհարարական ավանդույթների զարգացման եւ պահպանման» հասարակական կազմակերպության ղեկավար, հայտնի խոհարար Սեդրակ Մամուլյանը, Տավուշի մարզի փոխմարզպետ Նարեկ Ղուշչյանը, Հայաստանում Վրաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Գիորգի Շարվաշիձեն, Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Աշոտ Սմբատյանը:

Փառատոնի շրջանակներում անցկացված միջոցառումներին ներկա էին Վրաստանի էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարարության տուրիզմի ազգային վարչության պետի առաջին տեղակալ Թամար Կորիաուլին, Վրաստանի տուրիզմի ասոցիացիայի նախագահ Նատա Կվաճանտիրաձեն, Վրաստանի խոհարարների ասոցիացիայի նախագահ Թամազ Սիխարուլիձեն, Հայաստանում Վրաստանի դեսպանորդ Իրակլի Կվանճախաձեն:

Փառատոնն ուղեկցվեց հայկական եւ վրացական մշակութային խմբերի երաժշտական եւ պարային կատարումներով: Համերգային բաժնում Վրաստանը ներկայացրեց Թբիլիսիի պետհամալսարանի «Ունիվերսիտետի» պարային համույթը:

Փառատոնը անցկացվեց Հայաստանի էկոնոմիկայի նախարարության, Զբոսաշրջության կոմիտեի, Դիլիջանի համայնքապետարանի, Տուրիզմի հայկական ֆեդերացիայի, «Հայ խոհարարական ավանդույթների զարգացման եւ պահպանման» հասարակական կազմակերպության աջակցությամբ, Վրաստանի տուրիզմի ասոցիացիայի եւ Վրաստանի խոհարարական ֆեդերացիայի հետ համագործակցությամբ:

Սեփական լրատվություն

ՀԱՐՑ - ՊԱՏԱՍԽԱՆ ❋ ԱՅԼԱՋԱՆ ❋ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

ՕՐԱՑՈՒՅՑ

ՀՈՒՆԻՍԻ 18-Ը՝ ՀԱՅՐԵՐԻ ՕՐ

Որոշակի որեն անարդարացի եմ համարում այն, որ գլոբալ ծավալներով նշվում է Մայրության օրը եւ կամ Կանանց միջազգային օրը միաժամանակ ոչ ոք չի հիշատակում տղամարդկանց՝ հայրերին: Գուցե սահմանենք ու մի օր էլ հայտարարենք տղամարդկանց կամ հայրերի օր:

Տ.ՍԱՐԳՍՅԱՆ
Բոլնիսի

Գուցե զարմանաք, սակայն նման օր գոյություն ունի: ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի (UNFPA) վրաստանյան գրասենյակի եւ Care Together ոչ կառավարական կազմակերպության նախաձեռնությամբ, «Տղամարդիկ հոգ են տանում» արշավի շրջանակներում, հունիսի 18-ը Վրաստանում, արդեն 8-րդ անգամ՝ որպես Հայրերի օր է նշվում:

Տոնը նշելու եւ հանրային իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով՝ հունիսի 9-ից մինչեւ հունիսի 18-ը Թբիլիսիում փակցված թվային պաստառների վրա գրված էին Հայրերի օրվա թեմայով շնորհավորական գովազդներ:

UNFPA-ի վրաստանյան գրասենյակի ղեկավար Լելա Բաքրաձեի խոսքով՝ նախաձեռնելով Հայրերի օրվա տոնակատարությունը՝ եւս մեկ անգամ հիշեցնում ենք, թե որքան կարեւոր է, որ տղամարդիկ ներգրավված լինեն երեխայի խնամքի ու դաստիարակության մեջ եւ, ընդհանրապես, ընտանեկան աշխատանքի բեռը հավասարապես կիսեն կանանց հետ:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

ՄԱԶԵՐԻ ԽՆԴԻՐ ՈՒՆԵՄ. ԿՈՏՐՎՈՒՄ ԵՆ, ԹԱՓՎՈՒՄ, ԹԵՓ Է ԱՌԱՋԱՆՈՒՄ

Ընդամենը 27 տարեկան եմ, դեռ չեմ ամուսնացել: Մազերի հետ կապված լուրջ հիմնախնդիր ունեմ՝ կոտրվում են, թափվում... Գլուխս այնպես է թեփոտում, որ ամաչում եմ մուգ գույնի վերնաշապիկ կամ կոստյում հագնել: Գուցե որեւէ խորհուրդ տաք:

Գ.Վ.
Նինոծմինդա

Մազերի թափումը, ինչպես նաեւ կոտրումը, թերեւս, մազերի հետ կապված ամենատարածված խնդիրն է:

Մազաթափություն կարող է առաջանալ օրգանիզմում որեւէ սննդարար նյութի (առաջին հերթին՝ երկաթի) պակասից: Երկաթի պակասը լրացնելու համար անհրաժեշտ է սննդի մեջ ներառել լյարդ, միս, ձու, գազար, ծիրան:

Մազերի համար պակաս կարեւոր չեն նաեւ սպիտակուցները, որոնք ամրացնում են մազարմատները, այդպիսով արգելակելով մազաթափությունը: Ուստի, պետք է սնվել հավի, ձկան, տավարի մսով, ձվով, չրերով, ընկույզով:

Մազաթափությանը խոչընդոտում է նաեւ E վիտամինը, այն առատ է յուղի ու ձեթի մեջ, հավկիթում, գազարում, մասուրում, տաքդեղում:

Թեփի դեմ օգտակար է պղինձը, որը պարունակվում է ձկան, հավի, ոչ ճարպոտ մսի, ձվի (հատկապես՝ լորի) եւ ընդեղենի մեջ: Պղինձը նաեւ մասնակցում է մազերի գունավորմանը՝ խոչընդոտելով դրանց ճերմակելը:

Մազերը կարող են լինել ճարպոտ, չոր եւ կոտրվող: Մազերի շատ չոր լինելը խոսում է ճարպաթթուների պակասի մասին: Չորության դեպքում օգտակար են ճարպոտ ձուկը, հացահատիկը, ընկույզը, ձեթը: Երբեմն առաջանում է նաեւ օրգանիզմում ջրի պակասից: Օրական խորհուրդ է տրվում խմել 6-8 բաժակ ջուր:

Շատ ճարպոտ մազերը մաշկի ճարպային նյութափոխանակության խանգարումների հետեւանք են: Օգտակար է B վիտամինը (ընկույզ, կաթնամթերք, ձու, ընդեղեն):

ԽՈՐՀՈՒՐԴ՝ ԸՆԹԵՐՑՈՂԻՑ

❒ Խամրած մետաղյա իրերը փայլեցնելու համար՝ խառնել ալյուրը, աղը, քացախը եւ այդ խառնուրդով շփել մելքիորե կամ արծաթե սպասքը:

❒ Եթե խոհանոցի լվացարանը խցանվել է, դրա մեջ աղ լցրեք, այնուհետեւ՝ եռջուր: Մի քանի վայրկյանից կնկատեք, որ խցանումը բացվել է, ջուրն այլեւս չի հավաքվում:

❒ Սուրճը հրաշալի օգնում է ասթմայի դեպքում, եթե հիվանդությունը շատ բարդ ընթացք չունի: Ասթմայի միջին ու ծանր դեպքերում սուրճն անզոր է:

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՆՀԱՅՏ ԷՋԵՐ

«ԱԼԼԱՀԻ ՍՏՎԵՐԸ»՝ ԳԻՈՐԳԻ ՍԱԱԿԱՁԵԻ ԴԵՄ

Միջնադարյան վրաց զորավար, Մեծ Մոուրավի, վրաց ժողովրդի ազգային հերոս Գիորգի Սաակաձեի (մոտ՝ 1580-1629) մասին գեղարվեստական շատ գործեր են գրվել, նկարահանվել է կինոնկար:

Ինչպես տեղեկացնում է Հայաստանի հանրագիտարանը, ծագումով թագավորական ազնուրներից Գիորգի Սաակաձեն 1608 թվականից Թիֆլիսի մոուրավին (կառավարիչ) էր: Երազում էր երկրի կենտրոնացման համար, պայքարում՝ խոշոր թավադների դեմ: Պալատական բանսարկությունների պատճառով՝ 1612 թվականին անցել էր Իրան, որտեղ ձեռք էր բերել շահ Աբբաս I-ի վստահությունը: 1620-ին շահը Սաակաձեին նշանակել էր Քարթլիի մանկահասակ թագավոր Սիմոն II-ի խնամակալ, եւ Սաակաձեն փաստորեն դարձել էր Քարթլիի կառավարիչը: Սակայն, երբ պարսկական զորքերը սկսել էին կոտորել Քարթլիի բնակիչներին, նպատակ ունենալով լիովին նվաճել երկիրը, Քարթլիի եւ Կախեթիի բնակչությունը ապստամբել էր: Ապստամբության գլուխ էր կանգնել Սաակաձեն: 1625-ին, Մարաբդայի ճակատամարտում պարտվելուց հետո, ապստամբները պարտիզանական պայքար էին սկսել: Պարսիկները հարկադրված ճանաչել էին թագավոր Թեյմուրազ I-ի թագավորությունը Քարթլ-Կախեթիում: Շուտով թավադներին հաջողվել էր գժտեցնել Թեյմուրազ I-ին եւ Սաակաձեին: Սաակաձեն ապստամբել էր եւ, 1626-ին Բազալեթի ճակատամարտում պարտվելով, փախել Թուրքիա, որտեղ եւ սպանվել էր:

Ստորեւ ներկայացնում ենք Մեծ Մոուրավիի կյանքի վերաբերյալ լայն հասարակությանն անհայտ փաստեր, որոնք է՛լ ավելի են հզորացնում Մեծ զորավարի կերպարը:

Գիորգի Սաակաձե (իտալական միսիոներ նկարիչ՝ Թերիմո Կաստելլի, 1627 թ., Ստամբուլ)

1612 թվականին Վրաստանից փախուստ տված Գիորգի Սաակաձեն՝ Իրանում սկսեց ծառայել շահ Աբբասին: «Ալլահի ստվերը»՝ ինչպես մեծարում էին Իրանի ինքնակալին, հիանալի տեղեկացված էր Սաակաձեի զորավարական հմտության եւ արիության մասին եւ ուրախությամբ ընդունեց հայրենիքից վտարվածին: Նրան ընդունեց իր շրջապատում այնքան մերձավոր, որ, ըստ պատմածների, նույնիսկ առանց նրա սեղան չէր նստում եւ միշտ պահում էր իր մոտ: Եվ Սաակաձեն էլ «հնազանդորեն» գտնվում էր իրանական առյուծի կողքին...

Թեպետ շահը տեղեկացված էր, որ Սաակաձեն գերմարդկային ուժի տեր է, սակայն շարունակում էր կասկածել: Նա ցանկանում էր համոզվել վրաց զորավարի ֆիզիկական ուժի ու հմտության մեջ եւ նրա համար պատրաստեց երեք փորձություն:

Մեկ անգամ սեղանի շուրջ՝ շահը Գիորգի Սաակաձեին ասաց, որ նա անընդհատ մռայլ է, եւ ինքը ցանկանում է նրան ուրախացնել: Ծառաները ներս բերեցին 8 արծաթով լեցուն պարկեր եւ դրեցին տիրակալի ոտքերի մոտ: Աբբասը, դիմելով Սաակաձեին, ասաց. եթե կարողանա այդ ութ պարկերը բարձրացնել ու հասցնել դահլիճի դռների մոտ, ապա այդ փողերը կլինեն իրենը, եւ նա կճանաչվի որպես ուժեղագույն:

Սաակաձեն առանց դժվարության բարձրացրեց բոլոր այդ պարկերը եւ հասցրեց դահլիճի դռանը: Շահը հիացած էր, իսկ ճաշկերույթին ներկա վրացիները գունատվեցին նախանձից, որ իրենց հայրենակիցը մի ակնթարթում դարձավ մեծ հարստության տեր:

Անցավ որոշ ժամանակ, մեկ անգամ, շահ Աբբասի հրամանով, Իսպահանի գլխավոր հրապարակում անց էր կացվում ըմբշամարտի մրցույթ: Պարսիկները մրցման դուրս բերեցին իրենց անհաղթ հսկային, որը ցանկություն էր հայտնել իր ուժերը չափել վրացիների հետ: Հրապարակում հայտնվեցին նաեւ վրացիներ, թեպետ անհաղթելի պարսիկը նրանց բոլորին թիակների վրա պառկեցրեց: Պարսիկների ուրախ բացականչությունները ցնցեցին ողջ հրապարակը: Եվ այդ ժամանակ շահը Գիորգի Սաակաձեին հրամայեց իր ուժերը չափել պարսիկ հսկայի հետ: Վրաց զորավարը հագավ ըմբշամարտի չոխան եւ դուրս եկավ ասպարեզ...

Մենամարտը երկար չտեւեց: Սաակաձեն՝ ինչպես երեխայի բարձրացրեց պարսիկ ըմբշամարտիկին ու գետնին շպրտեց:

Մեկ անգամ շահը հարցրեց Գիորգի Սաակաձեին, թե զենքի ո՞ր տեսակն է ձեռնտու այն մարդուն, ով հայտնվել է դժբախտության մեջ:

- Պետք կգա այն ամենը, ինչ փորձության պահին գտնվում է ձեռքի տակ,- պատասխանեց Մեծ Մոուրավին:

Այս խոսակցությունից կարճ ժամանակ անց՝ բոլորը մոռացան՝ բացառությամբ իրանական առյուծի, ով Սաակաձեի համար երրորդ փորձությունն էր պատրաստում: Եվ ահա մի օր, Գիորգի Սաակաձեն շրջում էր այգում, գոտու վրա ամրացրած ուներ մի փոքր դաշույն, որից երբեք չէր բաժանվում: Անսպասելիորեն հայտնվեցին երկու քաղցած առյուծներ ու հարձակվեցին մտքերով տարված Սաակաձեի վրա: Վրաց զորավարն ակնթարթորեն սթափվեց, առյուծներից մեկի երախը խցկեց իր գլխարկը, իսկ երկրորդին հարվածեց դաշույնով, ապա՝ կրկին շուռ եկավ առաջին առյուծի կողմը եւ, մինչեւ այն կարողացավ ազատվել կոկորդում խցկված գլխարկից, նույն փոքր դաշույնով սպանեց գիշատչին: Իսկ ինքը՝ Սաակաձեն, շատ հանգիստ՝ իր արյունոտված դաշույնը խրեց առյուծի բաշին՝ մաքրելով այն:

«Ալլահի ստվեր» շահ Աբբասը

Տեղի ունեցածին հետեւում էր ոչ հեռու թաքնված շահ Աբբասը, ով անձամբ համոզվեց, թե ինչպես Սաակաձեն, սառնասրտորեն ու առանց իրարանցման, հաղթեց երկու քաղցած առյուծների:

Այդ օրվանից «Ալլահի ստվերը» Գիորգի Սաակաձեի համար նման փորձություններ այլեւ չէր պատրաստում...

ԹԵՎԱՎՈՐ ՄՏՔԵՐ

☞ *Կարողացեք ձեզ պատկերացնել մեկ այլ մարդու վիճակում եւ հասկանալ, թե ինչ է պետք նրան, այլ ոչ թե ձեզ: Աշխարհը նրա հետ կլինի, ով կկարողանա դա անել:*

ԴԵՅԼ ՔԱՐՆԵԳԻ

☞ *Եթե ցանկանում եք նաեւ վաղը պտուղներ վայելել, ամեն օր սերմեր ցանեք: Եթե գեթ մեկ րոպե թուլանաք, ապա անխուսափելիորեն հետ կգլորվեք:*

ԴՈՆԱԼԴ ԹՐԱՄՊ

☞ *Երբեք թեւաթափ մի եղեք: Մեր ամենամեծ սխալն այն է, որ չափից դուրս արագ ենք ձեռքներս ծալում: Հաջողության հասնելու ամենահաստատուն ճանապարհն այն է, երբ անդադար կրկին ես փորձում:*

ԹՈՄԱՍ ԷԴԻՍՈՆ

☞ *Հեղինակությունդ վատն է միայն այն ժամանակ, երբ ապրում ես ինչպես ինքդ ես ուզում եւ ոչ այնպես, ինչպես ուզում են ուրիշները:*

Մ.ՄԱԹՈՍՅԱՆ
«Վրաստանի» ընթերցող
Նինոծմինդա

ՀԱՅԱՍՏԱՆ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳՐԱՆՑՎԵԼ Է ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐԻ ԱՀԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՌԵԿՈՐԴ

ԱՐՁԱՆԱԳՐՎԵԼ Է ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ

Հունիսի 22-ին, Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի նախագահությամբ անցկացվեց երկրի կառավարության հերթական նիստը:

Նիստի մեկնարկին Նիկոլ Փաշինյանը հանրագումարեց ընթացիկ տարվա առաջին հինգ ամիսների տնտեսական արդյունքները՝ նշելով, որ Հայաստանում, 2023 թվականի մայիսի դրությամբ, գրանցված աշխատատեղերի հերթական պատմական ռեկորդ է սահմանվել:

- Մենք հերթական պատմական ռեկորդ ենք արձանագրել եւ մայիսի արդյունքներով ունենք 718 հազար 266 գրանցված աշխատատեղ: Հիշեցնեմ, որ 2018 թվականի մայիսից ի վեր Հայաստանի Հանրապետությունում ստեղծվել է 170 հազար 277 աշխատատեղ: Ընդ որում, նախորդ տարվա ապրիլի եւ մայիսի համեմատ, նույնպես աճ ունենք,- ասաց Նիկոլ Փաշինյանը:

Անդրադառնալով աշխատավարձի թեմային՝ վարչապետը հայտարարեց, որ երկրում աշխատավարձի ֆոնդի շոշափելի աճ է արձանագրվել:

- 2018 թվականի մայիսի համեմատ՝ 2023 թվականի մայիսին, Հայաստանում աշխատանքային ֆոնդը կրկնապատկվել է՝ ավելանալով 106,6 տոկոս կամ 103 միլիարդ 40 միլիոն դրամով: Այսինքն, այսօր Հայաստանում աշխատող մարդիկ 103 միլիարդ 40 միլիոն դրամով ավելի աշխատավարձ են ստանում, քան 2018 թվականի մայիսին:

Շատ կարեւոր է նաեւ միջին աշխատավարձի ցուցանիշը: Հայաստանում մեկ մարդու միջին աշխատավարձը, 2018 թվականի մայիսի համեմատ, ավելացել է 101 հազար 629 դրամով կամ 57,6 տոկոսով, իսկ նախորդ տարվա մայիսի համեմատ՝ 40 հազար 323 դրամ կամ 17 տոկոսով: Հայաստանում աշխատավարձը շարունակական բարձրանում է,- ընդգծեց վարչապետը:

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՆՑԿԱՑՎԵՑ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ ՔՆՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏ

Հունիսի 20-ին, Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի մասնակցությամբ անցկացվեց Ազգային ժողովի՝ պատերազմի հանգամանքները քննող հանձնաժողովի նիստը:

Քննիչ հանձնաժողովը մինչեւ այժմ բոլոր նիստերը՝ հրավիրված ներկա եւ նախկին պաշտոնյաների, զինվորականների մասնակցությամբ, անցկացրել է դռնփակ: Նիկոլ Փաշինյանը ցանկություն էր հայտնել, որ քննիչ հանձնաժողովում իր հարցաքննությունը լինի հրապարակային: Ավելի վաղ՝ նա Ազգային ժողովի ամբիոնից հայտնել էր՝ պատրաստվում է քննիչ հանձնաժողովում պատմել, թե որն է եղել 2020-ի հոկտեմբերի 19-ին հրադադարի պայմանագիր չստորագրելու պատճառը, ինչի մասին խոսել է նաեւ Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը:

- Քննիչ հանձնաժողովի բոլոր հարցերին կպատասխանեմ հրապարակային: Բայց ենթադրում եմ, որ կլինեն հարցեր, որոնց հրապարակավ պատասխանելիս ավելացնելու բան կունենամ: Եթե այդ հավելումը կհամարեմ հրապարակման ոչ ենթակա, կխնդրեմ հնարավորություն տալ լրացումներն իրականացնել դռնփակ ռեժիմով,- հայտարարեց Նիկոլ Փաշինյանը:

Վարչապետի՝ քննիչ հանձնաժողովում ներկայացված զեկույցը կնդգրկվի հանձնաժողովի վերջնական զեկույցի փաթեթի մեջ:

Ընդդիմադիր «Հայաստան» եւ «Պատիվ ունեմ» խմբակցությունները հայտարարել են, որ չեն մասնակցելու վարչապետի մասնակցությամբ անցկացվող քննիչ հանձնաժողովի նիստին:

ՎԱՀԱԳՆ ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆԸ ԲԵՌԼԻՆՈՒՄ ՆԵՐԿԱ Է ԳՏՆՎԵԼ ՀԱՏՈՒԿ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐԻ ԲԱՑՄԱՆԸ

Հունիսի 18-ին, Հայաստանի նախագահ Վահագն Խաչատուրյանը, գերմանական կողմի հրավերով, աշխատանքային այցով գտնվում էր Գերմանիայի մայրաքաղաք Բեռլինում:

Աշխատանքային ացի շրջանակներում՝ Հայաստանի նախագահը մասնակցեց Բեռլինում անցկացվող Հատուկ օլիմպիական խաղերի բացման հանդիսավոր արարողությանը:

Նշենք, որ Խաղերին մասնակցում են նաեւ Հայաստանը ներկայացնող մարզիկներ: Միջոցառման ընթացքում Վահագն Խաչատուրյանը ողջունել եւ կարճատեւ զրույց է ունեցել Գերմանիայի կանցլեր Օլաֆ Շոլցի եւ Գերմանիայի ներքին գործերի նախարար Նենսի Ֆեզերի հետ:

Աշխատանքային այցի ընթացքում՝ Հայաստանի նախագահը հանդիպումներ ունեցավ նաեւ Գերմանիայի նախագահի եւ բարձր ղեկավարության, ինչպես նաեւ հայկական համայնքի ներկայացուցիչների հետ:

ԿԱՐԵՎՈՐՎԵՑ ԵՎՐԱԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Հունիսի 20-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը հանդիպում ունեցավ Եվրոպական խորհրդարանի անվտանգության եւ պաշտպանության հարցերով ենթակոմիտեի նախագահ Նատալի Լուազոյի գլխավորած պատվիրակության հետ:

Հանդիպմանը վարչապետը կարեւորեց Եվրոպական խորհրդարանի հետ սերտ համագործակցությունը եւ բարձր գնահատեց վերջինիս կողմից Լաչինի միջանցքի անխափան գործունեության ապահովման վերաբերյալ ընդունած բանաձեւը: Նիկոլ Փաշինյանը վստահություն հայտնեց, որ ԵՄ պատվիրակության անդամների այցը կնպաստի տարածաշրջանում ստեղծված իրավիճակը գնահատելուն:

Հանդիպմանը անդրադարձան տարածաշրջանային տրանսպորտային ենթակառուցվածքների ապաշրջափակման, սահմանների դելիմիտացիայի հնարավորություններին: Նիկոլ Փաշինյանը ներկայացրեց այդ հարցերի շուրջ հայկական կողմի դիրքորոշումները:

ՎՐԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՑ ՀԵՏՈ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԺ-Ն ԵՎՍ ՁԵՌՆԱՄՈՒԽ ԵՂԱՎ ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԸ ԻՑ ՔԱՐՏՈՎ ՀԱՏԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Ընդգծենք նաեւ, որ Վրաստանի եւ Հայաստանի միջեւ այցեգրային պայմանակարգ չի գործում: Վրաստանի եւ Հայաստանի միջեւ գործում է քաղաքացիների համար առանց մուտքի այցեգրերի այցելության պայմանակարգ, որը սահմանվում է 1993 թ. մայիսի 19-ին ստորագրված Վրաստանի եւ Հայաստանի քաղաքացիների՝ իրենց տարածքներով առանց այցեգրերի տեղաշարժման մասին համաձայնագրով:

Ներկայումս Վրաստանի քաղաքացիները՝ ՀՀ տարածքում առավելագույնս 180 օր՝ մեկ տարվա ընթացքում, Հայաստանի քաղաքացիները, անձը հաստատող փաստաթղթով, Վրաստանի տարածքում կարող են գտնվել մինչեւ 1 տարի ժամկետով: Նոր համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո՝ 1993-ի համապատասխան համաձայնագիրն ուժը կորցրած կճանաչվի: Համաձայնագիրը կքննարկվի ԱԺ լիագումար նիստում:

ԿԱՆՉԱՍԻ ՆԱԽԱՆԳԱՊԵՏՆ ՈՒ ԱԶԳԱՅԻՆ ԳՎԱՐԴԻԱՅԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հունիսի 22-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանն ընդունեց ԱՄՆ Կանզաս նահանգի նահանգապետ Լաուրա Քելլիին եւ Կանզասի Ազգային գվարդիայի հրամանատար, գեներալ-մայոր Մայքլ Վերներդին:

Զրուցակիցները քննարկեցին տնտեսության, գյուղատնտեսության եւ ռազմական կրթության ոլորտներում համագործակցության ընդլայնմանն ու խորացմանը վերաբերող հարցեր:

Լաուրա Քելլին շեշտեց Հայաստանի հետ կապերն ամրապնդելու պատրաստակամությունն ու շահագրգռվածությունը:

Անդրադարձ կատարվեց Հայաստանում ժողովրդավարական բարեփոխումների ընթացքին: Վարչապետ Փաշինյանն ընդգծեց ԱՄՆ վարչակազմի աջակցությունը՝ Հայաստանի կառավարության ինստիտուցիոնալ բարեփոխումների օրակարգն առաջ մղելու գործում:

ԿԱՐԵՎՈՐՎԵՑ ՎԵՐԻՆ ԼԱՐՍԻ ԱՆՑԱԿԵՏԻ ՈՒՂԻՆԵՐԻ ԱՎԵԼԱՑՈՒՄԸ

Ինչպես հայտարարեց Հայաստանի փոխվարչապետ Մհեր Գրիգորյանը՝ հունիսի 22-ից Վերին Լարսի անցակետում 11-ի փոխարեն գործում է 39 անցուղի:

- Սա շատ մեծ ու կարեւոր փոփոխություն է: 2020-21 թվականներին թողունակության ռեկորդը եղել է 300 բեռնատար, այդքան բեռնատար էր անցնում մեկ օրվա ընթացքում: Այսօր անցնում է 1500 մեքենա, որը շատ էական է: Ընդ որում, երեկ, 409 մեքենայի համար, ազատ տեղ կար,- ընդգծեց Մհեր Գրիգորյանը եւ հավելեց, որ այս լուծումը հայկական բեռնատարների համար որեւէ խոչընդոտ չպետք է առաջացնի:

- Շատ կարեւոր է նաեւ, որ Վրաստանում էլ՝ մինչեւ 2024 թվականի ավարտը, անցուղիների թիվը 9-ից դառնալու է 15,- նշեց Գրիգորյանը:

ՀԱՅԱՍՏԱՆԸ՝ ՈՐՊԵՍ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՐԵԼ Է 2,9 ՄԻԼԻԱՐԴ ԴՐԱՄ

Հայաստանը 2,9 միլիարդ դրամի չափով ֆինանսավորում կտրամադրի Արցախին՝ սոցիալական լարվածությունը մեղմելու համար:

«Ներկայացված նախագծով նախատեսվում է Հայաստանի 2023 թվականի պետական բյուջեի հարկային եկամուտներից 2,9 մլրդ դրամի չափով միջպետական վարկ տրամադրել Լեռնային Ղարաբաղին՝ հետպատերազմյան ժամանակահատվածում Լեռնային Ղարաբաղի տարածքում ստեղծված սոցիալական լարվածության մեղմմանն ուղղված լրացուցիչ ֆինանսավորման համար»,- նշված է նախագծի հիմնավորման մեջ:

ԵՎՐԱԽՈՐՀՐԴԻ ԲԱՆԱՁԵՎԸ՝ ԼԱՉԻՆԻ ՄԻՋԱՆՑՔԻ ՀԱՐՑՈՎ

Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովը, լիագումար նիստում, հավանություն է տվել Լաչինի միջանցքում տիրող իրավիճակի մասին բանաձեւին:

48 կողմ, 16 դեմ ձայների հարաբերակցությամբ՝ վեհաժողովը հաստատել է բանաձեւը, որի համաձայն, խոչընդոտվում է մարդկանց եւ ապրանքների ազատ, անվտանգ տեղաշարժը Լաչինի միջանցքով եւ կոչ է արվում Բաքվին անհապաղ կատարել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումը:

Բացի այդ, Եվրախորհրդարանի պատգամավորները կոչ են անում Ադրբեջանին՝ հրավիրել Եվրոպայի խորհրդի պատվիրակությանը Լաչինի միջանցք եւ Լեռնային Ղարաբաղ՝ փաստահավաք առաքելությամբ:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՀՈՒՆԻՍ

29.06.2023 Տոն՝ Սուրբ թարգմանիչներ Սահակի եւ Մեսրոպի

Ներսես Մեծ կաթողիկոսի որդին, Սուրբ Գրիգոր Լուսավորչի տոհմի վերջին ներկայացուցիչը Սահակ Պարթեւը, ով 387 թվականից սկսած 52 տարի եղել է հայոց հայրապետական աթոռի գահակալը, մեծ նպաստ է բերել հայ ազգային մշակույթի զարգացմանը, եղել հայոց գրերի ստեղծման ջատագովը, Մեսրոպ Մաշտոց վարդապետի հետ դարձել հայ դպրության ու եկեղեցական մատենագրության հիմնադիրը:

Տարվա ընթացքում Հայ եկեղեցին Սբ. Սահակ Պարթեւի եւ Սբ. Մեսրոպ Մաշտոցի հիշատակը տոնում է երկու անգամ:

ԱՄԱՌԱՅԻՆ ՀԱՆԳԻՍՏ

ՍԵՎ ԾՈՎԻ ՋՐԻ ՈՐԱԿԸ ՆՈՐՄԱՅԻ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ Է

Վրաստանի Շրջակա միջավայրի ազգային գործակալության փոխանցմամբ, լաբորատոր ուսումնասիրության համաձայն, Սեւ ծովի ջրի որակն ամբողջ պարագծով նորմայի սահմաններում է:

Եվրամիության ծովային ռազմավարության շրջանակային հրահանգով՝ Շրջակա միջավայրի ազգային գործակալությունը կատարելագործում է մոնիտորինգի համակարգերը, եւ այս փուլում արդեն ձեռք են բերվել ժամանակակից լաբորատոր սարքավորումներ, որոնց օգնությամբ կարելի է բարձր ճշգրտությամբ որոշել կոնկրետ աղտոտիչները:

«Շրջակա միջավայրի պահպանության եւ գյուղատնտեսության նախարարության շրջակա միջավայրի ազգային գործակալությունը, ամեն ամիս, 9 կայաններում վերահսկում է Սեւ ծովի ջրի որակը՝ դրանով իսկ որոշելով հիմնական ֆիզիկաքիմիական պարամետրերը, ներառյալ՝ աղիությունը, ինչպես նաեւ ջրում լուծված թթվածնի եւ բիոգեն տարրերի պարունակությունը:

Շրջակա միջավայրի ազգային գործակալության իրականացրած լաբորատոր ուսումնասիրությամբ պարզվել է, որ ծովի ջրի որակն ամբողջ պարագծով գտնվում է նորմայի սահմաններում»,- հայտնել են գործակալությունից:

ՍՊՈՐՏ

ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՎԱՔԱԿԱՆՆԵՐԸ ԶԲԱՂԵՑՆՈՒՄ ԵՆ ԵՐԿՐՈՐԴ ՏԵՂԸ ԻՐԵՆՑ ԽՄԲԵՐԻ ՄՐՑԱՇԱՐԱՅԻՆ ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ

Վրաստանի եւ Հայաստանի ֆուտբոլի ազգային հավաքականները, Եվրոպայի 2024 թվականի առաջնության խմբային փուլում համապատասխանաբար «A» եւ «D» խմբերում երեքական հանդիպումից հետո, զբաղեցնում են երկրորդ տեղը:

Վրաստանի հավաքականը, ընթացիկ տարվա մարտին սեփական հարկի տակ Նորվեգիայի թիմի հետ ոչ-ոքի ավարտված հանդիպումից հետո, Եվրո-2024-ի ընտրական փուլի երկրորդ հանդիպումն անցկացրեց Լառնակայում՝ Կիպրոսի հավաքականի հետ եւ լարված պայքարում հաղթեց 2:1 հաշվով:

A ԹԻՄԵՐ	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
Շոտլանդիա	4	4	0	0	9:1	12
Վրաստան	3	1	1	1	3:4	4
Նորվեգիա	4	1	1	2	5:7	4
Իսպանիա	2	1	0	1	3:2	3
Կիպրոս	3	0	0	3	2:8	0

Խմբի շրջանակներում երրորդ հանդիպումը վրաց ֆուտբոլիստներն անցկացրին Գլազգոյում՝ Շոտլանդիայի հավաքականի հետ: Անձրեւաջրով ծածկված խաղադաշտը լուրջ խոչընդոտներ առաջացրեց: Վրաստանի հավաքականը զիջեց 0:2 հաշվով: Ներկա դրությամբ Վրաստանի հավաքականը 4 միավորով երկրորդ տեղն է զբաղեցնում «A» խմբի մրցաշարային աղյուսակում:

Խմբային հաջորդ հանդիպումները Վրաստանի հավաքականը կանցկացնի սեպտեմբերին՝ սեպտեմբերի 8-ին կիյուրընկալի Իսպանիայի հավաքականին, ապա 12-ին կմեկնի Օսլո, ուժերը կչափի Նորվեգիայի թիմի հետ:

Ինչ վերաբերում է Հայաստանի հավաքականին, ապա խմբի՝ առաջին հանդիպմանը սեփական հարկի տակ Թուրքիայի 1:2 հաշվով կրած պարտությունից հետո, Հայաստանի հավաքականը Քարդիֆում 4:2 հաշվով առավելության հասավ Ուելսի հավաքականի նկատմամբ, ապա Երեւանում՝ 2:1 հաշվով պարտության մատնեց Լատվիայի հավաքականին:

Երեք հանդիպումից հետո իր ակտիվում գրանցած 6 միավորով Հայաստանի հավաքականը երկրորդն է «D» խմբի աղյուսակում:

D ԹԻՄԵՐ	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
Թուրքիա	4	3	0	1	7:5	9
Հայաստան	3	2	0	1	7:5	6
Խորվաթիա	2	1	1	0	3:1	4
Ուելս	4	1	1	2	4:7	4
Լատվիա	3	0	0	3	3:6	0

Սեպտեմբերի 8-ին Հայաստանի հավաքականը մրցակցի դաշտում իր ուժերը կչափի Թուրքիայի հավաքականի հետ, իսկ սեպտեմբերի 11-ին Երեւանում կընդունի Խորվաթիայի թիմին:

ՖՈՒՏԲՈԼԻ ՏՈՆԸ ԿՇԱՐՈՒՆԱԿՎԻ ՄԻՆՉԵՎ ՀՈՒԼԻՍԻ 8-Ը

ՎՐԱՍՏԱՆԸ ՀՅՈՒՐԸՆԿԱԼՈՒՄ Է ԵՎՐՈՊԱՅԻ ՄԻՆՉԵՎ 21 ՏԱՐԵԿԱՆՆԵՐԻ ՖՈՒՏԲՈԼԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆԸ

Հունիսի 21-ին, Թբիլիսիի, Բաթումիի եւ Քութաիսիի մարզադաշտերում, մեկնարկեց մինչեւ 21 տարեկանների Եվրոպայի ֆուտբոլի առաջնությունը: Մրցաշարը կշարունակվի մինչեւ հուլիսի 8-ը:

Չորս խմբերի բաժանված եվրոպական 16 թիմերից 8-ը, A եւ C խմբերով, ներառյալ Վրաստանի հավաքականը, հանդես են գալիս Թբիլիսիում, Բաթումիում եւ Քութայիսիում: Մյուս 8 թիմերը, եւս B եւ D խմբերով, հանդես են գալիս Ռումինիայի խաղադաշտերում:

Մրցաշարի մեկնարկային հանդիպմանը՝ Վրաստանի հավաքականը 2:0 հաշվով պարտության մատնեց Պորտուգալիայի ուժեղագույն թիմին: Հունիսի 24-ին Վրաստանի հավաքականը իր ուժերը կչափի Բելգիայի, իսկ հունիսի 27-ին՝ Նիդերլանդների հավաքականի հետ:

Ներկա դրությամբ Վրաստանի թիմը միանձնյա գլխավորում է «A» խմբի մրցաշարային աղյուսակը:

Ախալքալաքիի մունիցիպալիտետի քաղաքապետարանը, սակրեբուլոն, «Վրաստան» թերթի խմբագրությունը իրենց վշտակցությունն են հայտնում Համլետ Մովսիսյանին, սիրելի քրոջ՝ 60-ամյա

Լաուրա Գրիգորի ՄՈՎՍԻՍՅԱՆԻ

մահվան կապակցությամբ եւ ցավակցում են հանգուցյալի հարազատներին ու մերձավորներին:

Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնի կոլեկտիվը խոր վշտով ընկալեց թատրոնի երկարամյա վարորդ, 60-ամյա

Ռոբերտ Նիկիտի ՄԻԿԻՐՏՈՒՄՈՎԻ

մահը եւ իր ցավակցությունն է հայտնում հանգուցյալի հարազատներին, բարեկամներին ու մերձավորներին:

ԽԱՉԲԱՌ



ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 7.Գետային ջրահարս: 9.Կանոնավոր հետեւակ սուլթանական Թուրքիայում: 10.Հարգանք, պատիվ: 11.Մետաղի վարպետ: 12.Այս տեսակի: 15.Խաղի ժամանակահատված: 16.Անբավարար գնահատական: 17.Երկար ու սուր ծայրով խոցող սառը զենք: 19.«... Դու» մուլտֆիլմ: 21.Հոմոսապիենս: 24.Հրաբուխ Իտալիայում: 25.Կուտակել, հավաքել: 27.Քաղցր, բարձր կալորիականությամբ սննդամթերք: 28.Ալբանական դրամը: 30.Բանջարեղեն: 34.Գետ Վրաստանում: 35.Ռազմական նավերի միավորում: 38.Անձնական դերանուն: 39.Անստեղծ: 41.Կարմրել, ամաչել: 44.Իշխանություն խորհրդանշող բազկաթոռ: 45.Անորոշ, երերուն: 46.Բակի, մուտքի դուռ: 48.Գունագեղ թռչուն: 49.Շաղկապ: 50.Հանձնարարագիր: 51.Ազգությամբ հայ ֆրանսիական էստրադայի երգչուհի Քրիստիան ...:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.«Թեհրան-...», ֆիլմ: 2.Ենթադրում, կանխատեսում: 3.Մետաքսի որդ: 4.Գիպսակերտ: 5.Վիրահայ գրող ... Սեյրանյան: 6.Կինոդերասան Բրյուս ...: 8.Պարպվել, անմարդաբնակ դառնալ: 13.Անֆիլտր ծխախոտ: 14.Բոլիվիայի մայրաքաղաքը: 18.Մեսրոպատառ: 20.Հաննիբալի հայրը՝ Համիլկար ... (Կարթագեն): 22.Հայ երգիչ: 23.«...-յաման»: 26.XIII դարի վերջի հայ-վրացական պետական գործիչ, զորավար Խուլլու ... Արծրունի: 29.Աբեղա, սքեմավոր: 31.Հեղուկ շարակցական հյուսվածքի տարատեսակ: 32.Կարող, ընդունակ: 33.Բրդից գործած: 35.Որեւէ բնագավառի մեջ նոր թափանցել: 36.Լեռ Իսպանիայում: 37.Երկրպագում, դավանում: 40.Անգլիացի գրող ... Քրիստի: 42.Ոդիսեւսի հայրենի կղզին: 43.Լոգարիթմական հարաբերական մեծության արտահամակարգային միավոր: 46.Կծու ապուր: 47.Հայ գուսան:

Կազմեց ԷԼԼԱ ԱԹԱԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.Դափամա: 7.Սահյան: 11.Աթոռ: 12.Ավան: 15.Մացակյան: 16.Նկուղ: 17.Կռան: 19.Աքրա: 20.Ինտեր: 21.Իսկ: 22. Ադե: 24.Արի: 25.Ացտեկ: 26.Որոտ: 28.Ադելա: 31.Աբգար: 33.Անզոր: 35.Ոտ: 36.Բոբիկ: 38.Երմակ: 39.Պայտ: 42.Լողալ: 45.Եհովա: 48.Բրիգադ: 49.Գալ: 50.Սալոր: 51.Կենաց: 53.Վլե: 54.Ուդ: 56.Շա: 57.Որմ: 58.Տարեց: 61.Այս: 62.Մեներգ: 63.Են: 64.Տրե:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 2.Փամբակ: 3.Աբա: 4.Մոցարտ: 5.Առա: 6.Հայկ: 7.Սանա: 8.Ան: 9.Յակուտ: 10.Նաղարա: 13.Վառ: 14.Ահնիձոր: 18.Նիցցա: 22.Արաբ: 23.Դիդգորի: 25.Ալր: 27.Տիզ: 29.ԵԱՏՄ: 30.Մկկալ: 31.Ար: 32.Աբեղան: 34.Նապոլեոն: 36.Բկլիկ: 37.Բրեգվաձե: 40.Ավ: 41.Յասաման: 43.Ոգեղեն: 44.Ադաշ: 46.Հալ: 47.Ալմաստ: 48.Բրուտ: 52.Ցայգ: 55.Դամ: 59.Ռե: 60.Ցեց:

Գլխավոր խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ
Գլխ. խմբագրի տեղակալ՝ ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ
Համարի պատասխանատու՝ ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ
Համակարգչային ձեւավորումը՝ ՏԻԳՐԱՆ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

ՀՅՈԵՆՈ ՄՈՆԱՑԱՐՈՍ: ՄԱԾՈԼՈՆՈ 0105, Գ.ԱՅՈՎՆԵՂԼՈՆ ՀՈՒՇԱ 5.
Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105 Գ.Աբոնելի փ. 5
ՏԵԼ. ՀԵՌ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge E-mail: vrastan.press@gmail.com
Գրանցման վկայական № 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

«ՎՐԱՍՏԱՆՈ»
ՄԱԾՈԼՈՆՈ, ՍԱՀԱՐՈՎՅԵԼՈՎ
"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445